ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1722-Ա « 06 » ապրիլի 2026 թ.

ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ՓՈՂՈՑ Հ.48 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳԱԳԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Գագիկ Խաչատուրի Աբրահամյանի (ծնված 31.01.1970թ.) 17.11.2023թ. հ.Դ-143576-23 դիմումը: Երևան, Կենտրոն, Ռուսթավելու փողոց հ.48 հասցեում գտնվող ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 212.33քմ, որից 108.53քմ (114.0 քմ մակերեսով օրինական հողամասից պահպանվել է 108.53քմ) մակերեսով հողամասը Գագիկ Խաչատուրի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 13.03.2006թ. հ.2041095 վկայական):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 11.04.2019թ. հ.ԱՏ-09/04/2019-1-0032 տեղեկանքը, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 20.11.2023թ. հ.15133 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 08.09.2025թ. հ.20-Ել-143576 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Կենտրոն, Ռուսթավելու փողոց հ.48 հասցեի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1. Վերականգնել Երևանի Կենտրոն, Ռուսթավելու փողոց հ.48 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Գագիկ Խաչատուրի Աբրահամյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 108.53քմ մակերեսով հողամասին կից 103.8քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 103.8քմ մակերեսով հողամասի (որից 100.2քմ ընդհանուր համատեղ սեփականություն է Սյուզաննա Ավետիսյանի, Լիլիթ Ավետիսյանի, Վալենտինա Ներսեսյանի, Գոհար Ամրոյանի, Լևոն Ամրոյանի հետ, իսկ 3.6քմ՝ Սյուզաննա Ավետիսյանի, Լիլիթ Ավետիսյանի հետ) և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, Երևան, Կենտրոն, Ռուսթավելու փողոց հ.48 հասցեում գտնվող 212.33քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ